ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի կարիքների համար ուղղահայաց շերտավարագույրների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/15» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «19» նոյեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արտակ Բաղդասարյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Բաբկեն Ոսկանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Ռազմարդյունաբերության կոմիտեի գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպման վարչության գլխավոր մասնագետ

Արտակ Օհանյան՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործերի կազմակերպման վարչության տնտեսվար

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գնումների բաժնի ավագ մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (18.11.2021թ.) ժամը 10:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 19.11.2021 թ., ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ

		դրամ)
1	*Ուղղահայաց շերտավարագույրներ*	880 000

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	«ՍՈՒՐԱՉ» ՍՊԸ	Ք. Երևան, Ե. Կողբացու 30
2	«ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ	Ք. Երևան, Գալշոյան 15/2
3	«Լեվել-Էս» ՍՊԸ	Ք.Երևան, Դավիթ-Բեկի 106/7,
4	«Ֆոտոն» ՍՊԸ	Ք. Երևան, Ռոստոմի 58
5	ԱՁ Դավիթ Հովհաննիսյան	ք. Երևան, Կոմիտասի 56,

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԲՏԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-2021/15» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ	720000	20 %	864000	633600	20 %	760320	
2	«Լեվել-Էս» ՍՊԸ	640000	0 %	640000	640000	0 %	640000	
3	«Ֆոտոն» ՍՊԸ	732533	20 %	879039.6	732533	20 %	879039.6	

4	ԱՁ Դավիթ Հովհաննիսյան	879000	0 %	879000	879000	0 %	879000	
5	«ՍՈՒՐԱՁ» ՍՊԸ	880000	0 %	880000	880000	0 %	880000	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 19.11.2021թ.-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակից է համարվել «ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ-ն

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարության Հավելված 1 և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը կամ Հավելված 1.3/ առկայության մասին.

- ԱՁ Դավիթ Հովհաննիսյանի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «ՍՈՒՐԱՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները (Հավելված 1), իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

- «ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերից /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը /Հավելված 1/ և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը իսկ իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը կամ Հավելված 1.3-ը բացակայում է:

- «Լեվել-Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթղթերից /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը /Հավելված 1/, Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը, սակայն Հավելված 1.2-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 ԱՁ Դավիթ Հովհաննիսյանի, «Ֆոտոն» ՍՊԸ-ի և «ՍՈՒՐԱՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները (Հավելված 1), Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը և իրական շահառուների մասին հայտարարագիր Հավելված 1.2-ը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

8.2 Հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը՝ «ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ-ի և «Լեվել-Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու համար հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. նոյեմբերի 24-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

«ՍՏԱՐՏՄԱԼԵ» ՍՊԸ-ի և «Լեվել-Էս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանության մասին eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև նիստի կասեցման ժամկետի ավարտը՝ 2021թ.-ի նոյեմբերի 23-ը ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արտակ Բաղդասարյան

Անդամներ՝

_____ Բաբկեն Ոսկանյան

_____ Արտակ Օհանյան

Քարտուղար՝

_____ Օֆելյա Ասատրյան